2020 թ.-ի Մ.Վ.Լոմոնոսովի անվան Մրցույթի անցկացման առանձնահատկությունները

2020 թ.-ի աշնանը Մ.Վ.Լոմոնոսովի անվան Մրցույթի անցկացման առանձնահատկությունները

Շնորհավորում ենք նոր ուսումնական տարվա առթիվ: Ուսումնական տարին մեզ համար այնքան էլ դյուրին չէ, սակայն հուսով ենք, որ դժվարությունները կլինեն հնարավորինս քիչ: Սակայն, հրաժարվել մեծ թվով դպրոցականների տալ հնարավորություն նոր ուսումնական տարվա սկզբին հետաքրքիր առաջադրանքների լուծման համար, կլիներ այն ոչճիշտ: Քանի որ մի շարք շրջաններում Մրցույթը առկա անցկացնել հնարավոր չէ, որոշում է կայացվել այն անցկացնել **հոկտեմբերի 4**-ին հեռակա ձևաչափով առցանց (օնլայն) ռեժիմով https://online.olimpiada.ru/ կայքի օգնությամբ: Մինչև Մրցույթի օրը կոդի մուտքագրումը համապատասխան դաշտում անհրաժեշտ չէ: Մինչ մրցույթի անցկացման օրը կոդի մուտքագրման դեպքում կստանաք հաղորդագրություն՝ «Մասնակցի սխալ կոդ» ("Неверный код участника"):

Շտապենք կիսվել այս տարվա Մրցույթի անցկացման կանոնների հետ:

Անցկացման օրը. Մրցույթը կանցկացվի առցանց (օնլայն) ռեժիմով 2020 թ. **հոկտեմբերի 4**-ին:

Մրցույթի սկիզբը. Առաջադրանքների կատարումը կարելի է սկսել առավոտյան ժամը 7:30-ից (Մոսկվայի ժամանակով) /**8:30-ից (Երևան ժամանակով)**/

Տևողությունը. 5 ժամ (**300 րոպե**)

Մրցույթի ավարտը. սկսելուց 5 ժամ հետո, սակայն ոչ ուշ Մոսկվայի ժամանակով 15:00-ն /**Երևանի ժամանակով 16:00-ն**/: Այն դեպքում, երբ դուք կմասնակցեք մրցույթին Մոսկվայի ժամանակով ժամը 10:00-ից /**Երևանի ժամանակով ժամը 11:00-ից**/ հետո, միևնույնն է՝ Մրցույթը ավտոմատ կավարտվի Մոսկվայի ժամանակով 15:00-ին /**Երևանի ժամանակով 16:00-ին**/:

Դասարանները. Մրցույթի առաջադրանքները կազմված են 6-11-րդ (Ռուսաստան) /**7-12-րդ (Հայաստան)**/ դասարանների աշակերտների համար:

Առարկաներ. **քիմիա, աստղագիտություն, մաթեմատիկա, ֆիզիկա, գրականություն, լեզվաբանություն, կենսաբանություն և պատմություն** /химия, астрономия и науки о Земле, математика, физика, литература, лингвистика, биологии и истории/:

Մրցույթի լեզուն. **ռուսերեն:**

Մինչև մրցույթը. յուրաքանչյուր մասնակից պետք է ՆԱԽՕՐՈՔ ստանա իր սեփական **բանալին** առաջադրանքներին հասանելի դառնալու համար:

Բանալին հանդիսանում է տվյալ դասարանի բոլոր առարկաների առաջադրանքներին հասանելի դառնալու համար: Եղե՛ք ուշադիր:

Բանալին կփոխանցվի աշակերտներին դպրոցի կողմից գրանցվելուց հետո:

Մրցույթին մասնակցությունը **անվճար է**:

Մրցույթի առաջադրանքները կատարելու համար անհրաժեշտ չեն լրացուցիչ օժանդակ նյութեր: Բոլոր առաջադրանքները պետք է կատարել ինքնուրույն: Այն դեպքերում, երբ մրցույթի կազմակերպիչները կհայտնաբերեն ոչինքնուրույն աշխատանքների նշաններ, մասնակցի բոլոր առարկաներից առաջադրանքների արդյունքները կճանաչեն անվավեր:

Խնդրում ենք առաջադրանքները կատարելիս լինել ուշադիր: Նրանցում կլինեն ընտրովի, տեքստային և այլ տեսքերի:

Առաջադրանքների կատարումը հարմար կատարելու համար առաջարկում ենք պատճենահանել առաջադրանքը, լուծել նրանք և պատասխաններն ու լուծումներն մուտքագրել համակարգչում, որպեսզի համակարգչի դիմաց չնստել ամբողջ 5 ժամը:

Հուսով ենք, որ բոլոր ցանկացողները կստանան մեծ հաճույք հետաքրքիր առաջադրանքները ինքնուրույն լուծելու արդյունքնում: Բոլոր մասնակիցները, ովքեր ըստ չափանիշների կստանան բարձր միավորներ կպարգևատրվեն խրախուսական պատվոգրերով Մրցույթի ավանդական խրախուսման մեթոդներով ըստ առանձին և մի քանի առարկաների գնահատման չափանիշներով: Ստացեք հաճույք Մրցույթին մասնակցելով, լուծեք այն առաջադրանքները, որոնք ձեզ դուր է գալիս:

Մ.Վ.Լոմոնոսովի անվան Մրցույթը ընդգրկված է ՌԴ 2020-2021 ուսումնական տարվա դպրոցականների օլիմպիադաների ցանկի ՆԱԽԱԳԾՈՒՄ: Համաձայն Նախագծի քիմիան և աստղագիտությունը շնորհվել է երրորդ մակարդակի, իսկ մաթեմատիկա, ֆիզիկա, գրականություն, լեզվաբանություն, կենսաբանություն և պատմություն առարկաներին՝ երրորդ մակարդակ:

Պատվոգրերի արժանացած մասնակիցները չեն հանդիսանում Մրցույթի հիմնական փուլի հաղթողներ և չեն կարող հավակնել ընդունելության արտոնությունների:

10-11-րդ (Ռուսաստան) /**11-12-րդ (Հայաստան)**/ դասարանների աշակերտները, ովքեր Մրցույթի հիմնական փուլում /**հոկտեմբերի 4-ին**/ կստանան պատվոգրեր, հնարավորություն կստանան 2021 թ.-ի գարնանը մասնակցելու եզրափակիչ փուլին, որը կանցկացվի առկա ռեժիմով:

Մրցույթի պաշտոնական կայքն է՝ http://turlom.olimpiada.ru/